ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 20.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/37

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Ռինո» ՍՊԸ-ի կողմից 06.03.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/37 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Ռինո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ռինո» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված 06.03.2017թ. բողոքով բողոքարկել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի (այսուհետ նաև՝ Մրցույթ) հանձնաժողովի գործողությունները՝ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ավտոմեքենաների պահեստամասերի (անվադողեր, կուտակիչ մարտկոցներ) ձեռքբերման նպատակով հայտարարված հրավերի և տեխնիկական բնութագրի պահանջները, մասնավորապես՝ գնման առարկայի բնութագիրը:

ՀՀ պաշտպանության նախարարության բաց մրցույթի միջոցով գնման ընթացակարգի հանձնաժողովի և պատասխանատու ստորաբաժանման կողմից 1-6-րդ, 9-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ և 21-րդ չափաբաժիններով պահանջվել են համասեզոն անվադողեր

հիմնականում ռուսական արտադրության մեքենաների համար, այն դեպքում երբ Եվրասիական տնտեսական միության օրենդրությամբ և մասնավորապես ՌԴ-ում համասեզոն անվադողերի հասկացողությունը հանվել է շրջանառությունից:

Մրցույթի թիվ 8-րդ, 20-րդ և 21-րդ չափաբաժիններով նախատեսված անվադողերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը կազմելիս տեխնիկական բնութագիրը կազմվել է այնպես, որ դրան համապատասխանում է միայն մեկ ապրանքանիշի անվադողեր՝ GOODYEAR ապրանքանիշի անվադողերը, ինչպես նաև համեմատած 8-րդ չափաբաժնով նախատեսված նույն գնման առարկայի համար 2017թ. դեկտեմբեր ամսին կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-4/3» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում 225/75R16 չափսի համասեզոն անվադողի տեխնիկական բնութագրի հետ՝ կատարվել է արագության ինդեքսի 40կմ/ժ-ով բարձրացում և ներքին կառուցվածքը /Silent Armor Technology/ կիրառմամբ բառակապակցության ավելացում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված 1-6-րդ, 9-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ և 21-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրով նախատեսված են տարբեր չափսի անվադողեր, հիմնականում ռուսական արտադրության մեքենաների համար, որոնք պետք է լինեն համասեզոնային: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՌԴ-ն, առաջնորդվելով Եվրասիական տնտեսական միության օրենդրությամբ / ТЕХНИЧЕСКИЙ РЕГЛАМЕНТ ТАМОЖЕННОГО СОЮЗА о безопасности колесных транспортных средств / և համապատասխանեցնելով ոլորտը կարգավորող ներքին օրենսդրությունը Եվրասիական տնտեսական միության օրենդրության պահանջներին, սահմանել է անվադողեր

արտադրողների համար միայն 3 տեսակի անվադողեր՝ սովորական, ձմեռային և հատուկ նշանակության, իսկ համասեզոնային անվադողեր հասկացողությունը դուրս է եկել շրջանառությունից, քանի որ ձմռանը մեքենաների վրա պետք է տեղադրված լինեն միայն ձմեռային անվադողեր համապատասխան նշագրումներով: Տվյալ պարագայում M+S նշագրումը ՌԴ օրենսդրության համաձայն զետեղվում է միայն ձմեռային անվադողերի վրա և դա չի նշանակում համասեզոնային անվադողեր, ինչպես պահանջվում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրով:

Ընկերությունը նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Եվրասիական տնտեսական միության անդամ պարտավոր է նաև հիմք ընդունել Եվրասիական տնտեսական միության օրենդրական պահանջները, իսկ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի կողմից տերմինների սխալ և մեկը մյուսին հակասող կերպով մեկնաբանելը խառնաշփոտ իրավիճակ է ստեղծում մասնակիցների համար: Ընկերությունը նշել է, որ նման ձևով տեխնիկական բնութագիր կազմելու և մեկնաբանելու արդյունքում ՌԴ արտադրության անվադողերը չեն կարող մասնակցել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթին, ինչը միանշանակ հակասում է ՀՀ Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, քանի որ մրցակցության հավասար պայմաններ չի ապահովում հնարավոր մասնակիցների համար:

«Ռինո» ՍՊԸ-ն նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՌԴ-ն հանդիսանում է ՀՀ-ի դաշնակից երկիր և տնտեսական կապերի ձևավորվածության և ընդհանուր ապրանքների ՀՀ ներմուծման տեսանկյունից ամենախոշոր և գերիշխող դիրք ունեցող երկիրը՝ նման սահմանափակումը Ընկերության համար անհասկանալի է թվում:

Ընկերությունը հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված 8-րդ, 20-րդ և 22-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրում նշված է՝

- 8-րդ չափաբաժին - /Ավտոմեքենաների պահեստամասեր (Անվադող 225/75R16 համասեզոն) համասեզոն, նախատեսված ՈՒԱԶ, ՏՈՅՈՏԱ-ՀԻԼՅՈՒՔՍ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար, ներքին կառուցվածքը – /Silent Armor Technology,/

անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ ոչ պակաս T(190), Անվադողի բեռնվածության ինդեքսը ոչ պակաս 104, անվադողի բեռնվածությունը /կգ ոչ պակաս 900/:

- 20-րդ չափաբաժին - Անվադող 255/70R16 /համասեզոն, նախատեսված ՆԻՍԱՆ-ՆԱՎԱՐԱ մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար, ներքին կառուցվածքը-կեվլարից (KEVLAR, DuPont.TM) /
- 22-րդ չափաբաժին - Անվադող 265/65R17 /համասեզոն, նախատեսված ՋԻՊ ՊՐԱԴՈ, ԼԱՆԴ-ԿՌՈՒԶԵՌ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար, ներքին կառուցվածքը- կեվլարից (KEVLAR, DuPont.TM) /:

8-րդ, 20-րդ և 22-րդ չափաբաժինների Տեխնիկական բնութագրով պահանջվում է, որ ներքին կառուցվածքը լինի – /Silent Armor Technology և KEVLAR, DuPont.TM/ կիրառմամբ, որը հանդիսանում է /GOODYEAR/ անվադողեր արտադրող ընկերության նորարարական տեխնոլոգիան:

Սակայն Ընկերության կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում չի հայտնաբերվել որևէ ապրանքանիշի անվադողեր, որոնք արտադրվում են Silent Armor Technology և KEVLAR, DuPont.TM կիրառմամբ կամ ստացել են /GOODYEAR/ անվադողեր արտադրող ընկերությունից թույլտվություն նման տեխնոլոգիայի կիրառմամբ անվադողեր արտադրման համար: Այս պարագայում ստացվում է այնպես, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով ՀՀ պաշտպանության նախարարության բաց մրցույթի միջոցով գնման ընթացակարգի հանձնաժողովի և պատասխանատու ստորաբաժանման կողմից տեխնիկական բնութագրում նման պահանջ ներառելը ինքնաբերաբար սահմանափակում է հնարավոր մասնակիցների մասնակցության հնարավորությունը այդ գնման ընթացակարգին և ստեղծվում է մի իրավիճակ երբ տվյալ գնման ընթացակարգին կարող է մասնակցել միայն մեկ ապրանքանիշի /GOODYEAR/ անվադողերը:

Ընկերությունը գտնում է, որ կազմված տեխնիկական բնութագիրը մրցակցության հավասար պայմաններ չի ապահովում հնարավոր մասնակիցների համար և հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Ընկերությունը հայտնել է, որ համեմատած նույն գնման առարկայի համար / 225/75R16 չափսի համասեզոն անվադողի/ 2017թ. դեկտեմբեր ամսին կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ՀՄԱՊՁԲ-4/3 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում 225/75R16 չափսի համասեզոն անվադողի տեխնիկական բնութագրի հետ՝ կատարվել է պահանջվող անվադողերի արագության ինդեքսի 40 կմ/ժ-ով բարձրացում և որ ներքին կառուցվածքը լինի – Silent Armor Technology կիրառմամբ:

Ընկերության կարծիքով նման փոփոխությունները կատարվել են ոչ թե տվյալ տեխնիկայի համար նման անվադողերի շահագործման հիմնավոր անհրաժեշտությունից ելնելով, այլ հնարավոր մասնակիցների շրջանակը կրճատելու և նրանց մասնակցության հնարավորությունը սահմանափակելու նպատակով, քանի որ նախորդ տարիներին այդ տեխնիկայի համար և դրա շահագործման համար նախատեսված անվադողերի մասով սահմանվել է նույն տեխնիկական բնութագիրը առանց որևէ փոփոխությունների:

«ՌԻՆՈ» ՍՊԸ-ն պնդել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Ավտոմեքենաների պահեստամասերի (անվադողեր, կուտակիչ մարտկոցներ)» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի գործողությունները, որոշումները չեն համապատասխանում Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

1. Որոշում ընդունել ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի կողմից կազմված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին չհամապատասխանելու մասին:

2. Որոշում ընդունել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու կամ դադարեցնելու/ լուծարելու մասին և/կամ որոշում ընդունել նոր գնման ընթացակարգ կազմակերպելու մասին:

3. Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել փոփոխություններ կազմված բնութագիր-գնման ժամանակացույցի մեջ՝ հաշվի առնելով ներկայացված հիմնավորումները, կամ փոփոխություններով հանդերձ կազմակերպել նոր գնման ընթացակարգ:

«Ռինո» ՍՊԸ-ն, ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարության 12.03.2018թ. թիվ ԴՎԱ/841 գրության, որպես լրացուցիչ հիմնավորում դիմում-բողոքի մեջ նշված

փաստերի՝ ներկայացրել է Ընկերության կողմից կատարված ուսումնասիրությունը և ապացույցները:

Ընկերությունը հայտնել է, որ վկայակոչել է Եվրասիական տնտեսական միության օրենսդրության պահանջը, քանի որ անվադողերի համասեզոն հասկացողությունը դուրս է եկել շրջանառությունից Եվրասիական տնտեսական միության, մասնավորապես՝ ՌԴ-ում:

Ընկերությունը նշել է նաև այն փաստը, որ կազմված տեխնիկական բնութագրի արդյունքում սահմանափակում և խտրականություն արտահայտող պայման է կիրառվում դաշնակից երկրի արտադրանքի նկատմամբ:

Ընկերությունը, անդրադառնալով Պատվիրատուի կողմից ներկայացված DUNLOP, NOKIAN, PIRELLI, MICHELIN ընկերությունների վերաբերյալ տվյալներին, այն է՝ այդ անվադողերը արտադրում են /KEVLAR և ARAMID/ հյուսվածքի/նյութի կիրառմամբ, հայտնել է, որ Ընկերության կողմից կատարվել են ներկայացված անվադողերի մեծածավալ ուսումնասիրություն, որի արդյունքում հայտնել է հետևյալը.

- DUNLOP SP SPORT MAXX անվանումով անվադողերը հանդիսանում են ամառային անվադողեր, իսկ 20-րդ և 22-րդ չափաբաժիններով նախատեսված անվադողերը հանդիսանում են համասեզոնային անվադողեր,
- DUNLOP SP SPORT MAXX անվանումով անվադողերը չեն թողարկվում 20-րդ և 22-րդ չափաբաժիններով պահանջվող 255/70R16 և 265/65R17 չափսերով,
- MICHELIN PILOT SUPER SPORT անվանումով անվադողերը հանդիսանում են ամառային անվադողեր, իսկ 20-րդ և 22-րդ չափաբաժիններով նախատեսված անվադողերը հանդիսանում են համասեզոնային անվադողեր,
- MICHELIN PILOT SUPER SPORT անվանումով անվադողերը չեն թողարկվում 20-րդ և 22-րդ չափաբաժիններով պահանջվող 255/70R16 և 265/65R17 չափսերով,
- Nokian Hakkapeliitta 8 SUV, Nokian Hakkapeliitta 9 SUV, Nokian Hakkapeliitta R2 SUV, Nokian Hakkapeliitta LT2, Nokian Rotiiva AT Plus, Nokian Rotiiva AT, Nokian Rotiiva HT, Nokian Rockproof, Nokian Hakka Black 2 SUV, Nokian Hakka Blue 2 SUV անվանումով անվադողերը հանդիսանում են ձմեռային և ամառային անվադողեր, իսկ 20-րդ և 22-րդ չափաբաժիններով նախատեսված անվադողերը հանդիսանում են համասեզոնային անվադողեր,

• Nokian Hakkapeliitta 8 SUV, Nokian Hakkapeliitta 9 SUV, Nokian Hakkapeliitta R2 SUV, Nokian Hakkapeliitta LT2, Nokian Rotiiva AT Plus, Nokian Rotiiva AT, Nokian Rotiiva HT, Nokian Rockproof, Nokian Hakka Black 2 SUV, Nokian Hakka Blue 2 SUV անվանումով անվադողերը չեն թողարկվում 20-րդ և 22-րդ չափաբաժիններով պահանջվող 255/70R16 և 265/65R17 չափսերով, բացառությամբ Nokian Rotiiva AT, Nokian Hakkapeliitta 8 SUV և Nokian Hakkapeliitta 9 SUV անվադողերի, որոնք հանդիսանում են ամառային և ձմեռային անվադողեր:

• PIRELLI անվանումով անվադողերի մասով ընհանրապես Ընկերության համար անհասկանալի տվյալներ են ներկայացվել:

• Ընկերությունը նշել է նաև, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով հրավերի Տեխնիկական բնութագրով 8-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի համար սահմանված է պահանջ, որ ներքին կառուցվածքը լինի – /Silent Armor Technology/ կիրառմամբ, իսկ դա հանդիսանում է բացառապես /GOODYEAR/ անվադողեր արտադրող ընկերության նորարարական տեխնոլոգիան և դա հանրահայտ փաստ է, որի մասին Ընկերությունը ներկայացրել է նաև ապացույցներ: Իսկ ինչ վերաբերվում է ՊՆ-ի ներկայացրած հիմնավորմանը, թե իրենք նշելով ցանկացած արտադրող ապահովել են հնարավոր մասնակիցների մասնակցությունը տվյալ ընթացակարգին, Ընկերությունը համարում է այդ հիմնավորումը անհիմն հետևյալ պատճառներով.

• քանի որ ցանկացած կամ գոնե մի քանի ընկերություն այդ տեխնոլոգիան չի կիրառում իր արտադրանքի մեջ / այդ տեխնոլոգիայի բացառիկ իրավունքը պատկանում է մեկ ընկերության/, բնական է նաև այն հանգամանքը, որ ցանկացած արտադրողի արտադրանքը չի կարող համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին,

• /Silent Armor Technology/- դա անվադողերի վնասվելուց խուսափելու նորարարական տեխնոլոգիա է, իսկ /KEVLAR և ARAMID/- դա հյուսվածք/ նյութ է, ոչ տեխնոլոգիա, որը օգտագործվում է անվադողերի արտադրության մեջ:

Ընկերությունը հայտնել է, որ ինչ վերաբերվում է ՊՆ-ի բանավոր, ոչ պաշտոնապես, միայն սույն բողոքարկման ընթացակարգի ժամանակ ներկայացրած հիմնավորմանը, որ /Aramid/ հյուսվածքի տեսակները կարող են դիտարկվել որպես համարժեք /KEVLAR/-ին հիմնավոր չեն, քանի որ ՊՆ-ի կողմից անցկացվող մրցույթները շատ խստապահանջ

կերպով են անցկացվում և ցանկացած շեղում կամ տերբերություն նախնական տեխնիկական բնութագրից ՊՆ-ի կողմից դիտարկվում է ի վնաս մասնակցի և ոչ համարժեք:

Ընկերությունը անդրադառնալով, ՊՆ-ի ներկայացրած 11 ընկերությունների ցանկին, որոնք արտադրում են 225/75R16 չափսի անվադողեր, հայտնել է, որ դրանք բոլորը ամառային կամ ձմեռային անվադողեր են, իսկ հրավերով պահանջվում են համասեզոնային անվադողեր:

«Ռինո» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.03.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը Խորհրդին ուղղված 12.03.2018թ. թիվ ԴՎԱ/841 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար 24.01.2018թ-ին հայտարարվել է անվադողերի և կուտակիչ մարտկոցների ձեռքբերման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգ:

Պատվիրատուն հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերում թիվ 1-6-րդ, 9-րդ, 14-րդ, 16-17-րդ և 21-րդ չափաբաժիններում ՀՀ պաշտպանության նախարարությունը հրավերով պահանջել է «համասեզոն» նշանակության անվադողեր:

Բողոքաբերի այն պնդմանը, որ համասեզոնային անվադողեր հասկացությունը դուրս է եկել շրջանառությունից՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը նշել է, որ համասեզոնային անվադող հասկացությունը ոչ ՀՀ իրավական ակտերով և ոչ էլ ԵԱՏՄ կանոնակարգերով և օրենքներով շրջանառությունից, կամ կիրառությունից հանված չէ,

հետևաբար ՀՀ պաշտպանության նախարարությունը ղեկավարվում է ՀՀ կառավարության «Օդաճնշական դողերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» №1558-Ն առ 11.11.2004թ որոշմամբ, մասնավորապես՝ նշված որոշման 43-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանվում է, որ պատրաստի համաչափ դողերի երկու կողերի, իսկ ոչ համաչափ դողերի արտաքին կողի վրա պետք է մակնշված լինեն՝ ձմեռային դողերի համար M+S կամ M.S տառերը կամ բոլոր սեզոնների դողերի համար M&S կամ «All seasons» բառերը:

Պատվիրատուն հայտնել է, որ ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից նշված՝ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին մաքսային միության տեխնիկական կանոնակարգ»-ին, ապա համաձայն՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի №28 առ 14.04.2015թ. որոշման, Հայաստանի Հանրապետությունում կիրառության կանցնի սկսված 02.01.2020թ-ից մինչև 02.01.2022թ. ընկած ժամանակահատվածում, հետևաբար՝ ներկայումս այն Հայաստանի Հանրապետությունում ոչ մի իրավական ուժ չունի:

Պատվիրատուն նշել է, որ ՀՀ ՊՆ-ի կողմից թիվ 8, 20 և 22-րդ չափաբաժինների հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերում անվադողերի կառուցվածքը նշվել է Silent Armor Technology և KEVLAR, DuPont.TM, սակայն տվյալ նշումները որևէ ապրանքանիշի մատնանշում չեն պարունակում, այլ բնութագրում են այն կառուցվածքը, որը պետք է ունենա անվադողը, որտեղ նշվել է «կամ համարժեք» և «ցանկացած արտադրող» բառերի կիրառումը, քանի-որ նույն տեխնալոգիան է նաև Aramid-ը, իսկ բողոքաբերի այն պանդմանը, որ իրենց ուսումնասիրություններում իրենք չեն գտել այլ արտադրող Պատվիրատուն հայտնել է, որ առկա են առնվազն չորս արտադրողներ, բացի բողոքում նշված GOODYEAR ընկերությունից, համարժեք տեխնալոգիայով արտադրում են նաև DUNLOP, NOKIAN, PIRELLI, MICHELIN ընկերությունները, որոնց արտադրանքի հետ կապված փաստաթղթերի պատճենները կից ներկայացվել են:

Ինչ վերաբերում է այն հարցմանը, թե ինչու են ցանկանում ձեռք բերել այդպիսի կառուցվածքով անվադողեր, Պատվիրատուն հայտնել է, որ տվյալ կառուցվածքով անվադողերը ապահովում են վազքի երկարաձգում և շահագործման բարձր անվտանգություն: Տվյալ դեպքում վնասված անվադողով հնարավոր կլինի երթևեկել բավականին երկար տարածություն ինչը իր հերթին թույլ կտա արդեն անվտանգ գոտում կատարելու անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ:

Անդրադառնալով բողոքի երրորդ մասին, Պատվիրատուն հայտնել է, որ Պատվիրատուի կողմից արագության ինդեքսը բարձրացվել է ոչ թե 40 կմ/ժ արագությամբ, այլ 30 կմ/ժամով, ինչը պայմանավորված է ոչ միայն անվադողի կառուցվածքային փոփոխությամբ այլ նաև տեխնոլոգիաների զարգացման դինամիկայով: Արագության ինդեքսի փոփոխման հետ փոփոխվում են նաև այլ պարամետրեր, որոնք բնութագրում են տվյալ անվադողը, ինչի հետևանքով երկարաձգվում է շահագործման վազքը և ապահովում է բարձր անվտանգություն: Նմանատիպ անվադողերի ձեռքբերման նպատակահարմարությունը առաջացել է նախորդ տարիների ընթացքում այլ մակնիշի ամենագնաց ավտոմեքենաների շահագործումից:

Պատվիրատուն նշել է, որ 225/75R16 չափի և միաժամանակ 190 կմ/ժ արագության ինդեքս ապահովող անվադողեր արտադրվում են բազմաթիվ ընկերությունների կողմից՝ կից ներկայացնելով առնվազն 11 ընկերությունների կողմից արտադրվող մոդելներ:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն գտնում է, որ «Ռինո» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է, ոչ իրավաչափ և ենթակա է մերժման:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.03.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անվադողերի և կուտակիչ մարտկոցների

ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

2. Ընթացակարգի հրավերով նախատեսվել է գնման առարկա անվադողերի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հավելված N 1
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ -4/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափման մ/վ	Նշանակությունը, կառուցվածքը	Անվադողի անվանումը, պահեստանաշերտի մոդելը	Անվադողի արտադրողը (Brand)	Անվադողի արտադրության տարին	Անվադողի ինդեքսային նշումներ և բեռնվածության ինդեքսներ	Անվադողի արագության ինդեքսներ	Անվադողի ինչ նիշերով/նիշերով մակնշված
1	Անվադող 175/70R13	հատ	համասեզոն, նախատեսված ՎԱԶ-2106, 2107 մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	"Кама-217", "И-391"	ОАО "Нижнекамск шина", АО ПО "Алтайский шинный комбинат" կամ համարժեք				
2	Անվադող 185/65R14	հատ	համասեզոն, նախատեսված ՎԱԶ մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող					
3	Անվադող 205/70R14	հատ	համասեզոն, նախատեսված ԳԱԶ-31029 մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար:	Ցանկացած արտադրող				H(210)	82
4	Անվադող 205/70R15	հատ	համասեզոն, նախատեսված ԳԱԶ-3102, 3110 մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող				H(210)	86
5	Անվադող 205/70R16	հատ	համասեզոն, նախատեսված ՎԱԶ-2121 մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	"KAMA-FLAME", "NORTEC WT 580"	ОАО "Нижнекамск шина",АО ПО "Алтайский шинный комбинат" կամ համարժեք			S(180)	95	690
6	Անվադող 235/75R15	հատ	համասեզոն, նախատեսված ՎԱԶ-212140/BRONTO մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	"И-520 ПИЛИГРИМ", "Forward Professional 520"	ОАО "Нижнекамск шина",АО ПО "Алтайский шинный комбинат" կամ համարժեք			T(190)	96	710
7	Անվադող 215/90-15C	լրակազմ	ունիվերսալ, նախատեսված ՈՒԱԶ մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	"Я-245-1" , "Я-245"	ОАО "Нижнекамск шина",ОАО "Омскшина", АО ПО "Алтайский шинный комбинат"			Q(160)	97	730

					կամ համարժեք				
8	Անվադող 225/75R16	հատ	համասեզոն, նախատեսված Կիա Սորենտո մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար, ներքին կառուցվածքը- *SilentArmor Technology*	Ցանկացած արտադրող				S(180)	105
9	Անվադող 185/75R16 C	լրակազմ	համասեզոն, նախատեսված ԳԱԶԵԼ մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	"КАМА-301", "VS-22"	ОАО "Нижнекамск шина", ОАО "Волгайр-Пром" կամ համարժեք			K(110)	99	775
10	Անվադող 195R16C կամ 205/75R16 C	լրակազմ	ձմեռային, նախատեսված ԳԱԶԵԼ, Mersedes-Benz Sprinter մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող				T(190)	104
11	Անվադող 195R15C	լրակազմ	ամառային, նախատեսված Տոյոտա-Հիասե մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող				N(140)	104/102
12	Անվադող 195R15C	լրակազմ	ձմեռային, նախատեսված Տոյոտա-Հիասե մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող			10PR	R(170)	113/111
13	Անվադող 205/80 R16C (205R16C)	լրակազմ	համասեզոն, նախատեսված Միցուբիշի L-200, Տոյոտա-հիլյուքս մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող			PR8	R(170)	106/104
14	Անվադող 215/60R16	հատ	համասեզոն, նախատեսված Տոյոտա Քեմրի մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար,	Ցանկացած արտադրող			PR8	Q(160)	106/104
15	Անվադող 215/60R16	հատ	ձմեռային, նախատեսված Տոյոտա Քեմրի մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար,	Ցանկացած արտադրող				R(170)	110/108
16	Անվադող 205/60R15	հատ	համասեզոն, նախատեսված Տոյոտա-Կառոլլա մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար,	Ցանկացած արտադրող				V(240)	95
17	Անվադող 195/65R15	հատ	համասեզոն, նախատեսված ՀՅՈՒՆԴԱԻ-ԷԼԱՆՏՐԱ, ԿԻԱ-ՍԵՌԱՏՈ, ԳԱԶ-3110 մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող				H(210)	99
18	Անվադող 195/65R15	հատ	ձմեռային, նախատեսված ՀՅՈՒՆԴԱԻ-ԷԼԱՆՏՐԱ, ԿԻԱ-ՍԵՌԱՏՈ, ԳԱԶ-3110 մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող				H(210)	95
19	Անվադող 205/55R16	հատ	համասեզոն, նախատեսված ՀՅՈՒՆԴԱԻ-ԷԼԱՆՏՐԱ, ԿԻԱ-ՍԵՌԱՏՈ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող				H(210)	91
20	Անվադող 255/70R16	հատ	համասեզոն, նախատեսված ՆԻՍԱՆ-ՆԱՎԱՐԱ մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար, ներքին կառուցվածքը- *կևվարից (KEVLAR, DuPont.TM)*	Ցանկացած արտադրող				T(190)	91
21	Անվադող 225/65R17	հատ	համասեզոն, նախատեսված ՋԻՊ ՍՈՒՉՈՒԿԻ ԳՐԱՆՏ-	Ցանկացած արտադրող				H(210)	94

			ՎԻՏԱՄԱ, ՏՈՅՈՏԱ ՌԱՎ-4 մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար						
22	Անվադող 265/65R17	հատ	համասեզոն, նախատեսված ՋԻՊ ՊՐԱԴՈ, ԼԱՆԴ-ԿՈՈՒՋԵՌ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար, ներքին կառուցվածքը- *կեվլարից (KEVLAR, DuPont TM)*	Ցանկացած արտադրող				T(190)	111
23	Անվադող 265/65R17	հատ	ձմեռային, նախատեսված ՋԻՊ, ՊՐԱԴՈ, ԼԱՆԴ-ԿՈՈՒՋԵՌ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող				H(210)	102
24	Անվադող 275/65R17	հատ	համասեզոն, նախատեսված ՋԻՊ, ԼԵՔՍԻՈՒՍ մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող				T(190)	112
25	Անվադող 285/60R18	հատ	համասեզոն, նախատեսված ՋԻՊ ԼԱՆԴ ԿՈՈՒՋԵՌ ՊՐԱԴՈ, ՄԻՑՈՒԲԻՇԻ ՊԱՋԵՌՈ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող				Q(160)	112
26	Անվադող 235/55R19	հատ	համասեզոն, նախատեսված ՇԵՎՐՈԼԵ-ԿԱՊՏԻՎԱ մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող				T(190)	115
27	Անվադող 235/55R19	հատ	ձմեռային, նախատեսված ՇԵՎՐՈԼԵ-ԿԱՊՏԻՎԱ մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող				T(190)	116
28	Անվադող 225/75R16	հատ	ձմեռային, նախատեսված Կիա Սորենտո մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող				V(240)	105
29	Անվադող 305/40R22	հատ	համասեզոն, նախատեսված Ռենջ-ռովեր մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	Ցանկացած արտադրող				Q(160)	105
30	Անվադող 265/75R16	լրակազմ	համասեզոն,նախատեսված Նիսան-Նավարա, ՈՒԱԶ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար, պաշտպանաշերտը- գետնակառչակներով/MT,	Ցանկացած արտադրող				Q(160)	115/112
31	Անվադող 8.25R20	լրակազմ	Մոդելը՝ Ա-2, նախատեսված ԳԱԶ-53,ՊԱԶ մակնիշի ԱՏ-ների կամ համարժեք այլ տեխնիկայի համար, պահպանաշերտի գծանկարը- *ունիվերսալ, դողի կառուցվածքը՝ ռադիալ*	"Ա-2"	ՕԱՕ "Нижнекамск шина",ՕԱՕ "Омскшина" կամ համարժեք		V(240)	114	1180
32	Անվադող 9.00R20	լրակազմ	Մոդելը՝И-Н142Б-1 կամ И-Н142БМ, նախատեսված ԿամԱԶ-5320, ԶԻԼ-130 մակնիշի ԱՏ-ների կամ համարժեք այլ տեխնիկայի համար, պահպանաշերտի գծանկարը-*ունիվերսալ,դողի կառուցվածքը՝ ռադիալ*	"И-Н142Б-1", "И-Н142БМ",	ՕԱՕ "Нижнекамск шина",ՕԱՕ "Омскшина",ԱՕ ՊՕ "Алтайский шинный комбинат" կամ համարժեք		Q(160)	112/109	1120/1030
33	Անվադող 400/80-533 (1220x400-533)	լրակազմ	Մոդելը՝ И-П184, նախատեսված ԿամԱԶ-4310, 43105 մակնիշների ԱՏ-ների կամ համարժեք այլ տեխնիկայի համար, պահպանաշերտի	"И-П184"	ՕԱՕ "Нижнекамск шина",ՕԱՕ "Омскшина",ԱՕ ՊՕ	PR10	J(100)	125/122	1650/1500

			գծանկարը-*բարձր անցողունակության, դողի կառուցվածքը՝դիագոնալ*		"Алтайский шинный комбинат" կամ համարժեք				
34	Անվադող 245/70R19.5	հատ	Մոդելը՝ Cordiant FR-1, դեմի դեկային՝ 2 հատ, նախատեսված ԿամԱԶ-4308/Աղբատար կամ համարժեք այլ ԱՏ-ների համար, պահպանաշերտի գծանկարը-*դեկային,դողի կառուցվածքը՝ ռադիալ*	Cordiant Professional FR-1	ПАО "Ярославский шинный завод" կամ համարժեք	PR14	J(100)	140/137	2500/2300
35	Անվադող 245/70R19.5	հատ	Մոդելը՝ Cordiant DR-1, հետին քարշակային՝ 4 հատ, նախատեսված ԿամԱԶ-4308/Աղբատար կամ համարժեք այլ ԱՏ-ների համար, պահպանաշերտի գծանկարը-*քարշակային,դողի կառուցվածքը՝ ռադիալ*	Cordiant Professional DR-1	ПАО "Ярославский шинный завод" կամ համարժեք	PR10	G(90)	142	2650
36	Անվադող 255/70R22.5	լրակազմ	Նախատեսված Հինո-700 քարշակի կիսակցորդի կամ համարժեք այլ տեխնիկայի համար, պահպանաշերտի գծանկարը-ունիվերսալ, կառուցվածքը-ԼՄԿ, all steel (ամբողջական մետաղական կառուցվածքով)	Ցանկացած արտադրող			PR16	M(130)	136/134
37	Անվադող 12.00R20	լրակազմ	Նախատեսված ԿԱՄԱԶ-65225 ԱՏ-ի կիսակցորդի կամ համարժեք այլ տեխնիկայի համար, պահպանաշերտի գծանկարը-*ունիվերսալ, կառուցվածքը-ԼՄԿ, all steel (ամբողջական մետաղական կառուցվածքով)*	Ցանկացած արտադրող			PR16	M(130)	136/134
38	Անվադող 315/80R22.5	լրակազմ	Նախատեսված Հինո-700 քարշակի կիսակցորդի կամ համարժեք այլ տեխնիկայի համար, պահպանաշերտի գծանկարը-*ունիվերսալ, կառուցվածքը-ԼՄԿ, all steel (ամբողջական մետաղական կառուցվածքով)*	Ցանկացած արտադրող			PR16	M(130)	140/137
39	Անվադող 12.00R24	լրակազմ	Նախատեսված ՀԻՆՈ-700 քարշակի համար, պահպանաշերտի գծանկարը-*ունիվերսալ, կառուցվածքը-ԼՄԿ, all steel (ամբողջական մետաղական կառուցվածքով)*	Ցանկացած արտադրող			PR20	K(110)	154/151
40	Անվադող 11.00R20	լրակազմ	Մոդելը՝ И-111АМ, Նախատեսված ԿԱՄԱԶ, ՄԱԶ կամ համարժեք այլ ԱՏ-ների համար, պահպանաշերտի գծանկարը-*ճանապարհային,դողի կառուցվածքը՝ ռադիալ*	"И-111АМ"	ОАО "Нижнекамскшина", ОАО "Омскшина",АО ПО "Алтайский шинный комбинат" կամ համարժեք	PR18	L(120)	156/150	4000/3350
41	Անվադող 12.00R20	լրակազմ	Մոդելը՝ ИД-304М У-4 կամ ИД-304 У-4, նախատեսված ՄԱԶ	"ИД-304М У-4", "ИД-304 У-4"	ОАО "Нижнека	PR18	K(110)	154/151	3750/

			կամ համարժեք այլ ԱՏ-ների համար, պահպանաշերտի գծանկարը-*ունիվերսալ,դողի կառուցվածքը՝ ռադիալ*		мошина", ОАО "Омскшина",АО ПО "Алтайский шинный комбинат" կամ համարժեք				3450
42	Անվադող 1300x530-533	լրակազմ	Մոդելը՝ ВИ-3, նախատեսված ԿՈԱՀ մակնիշի ԱՏ-ների համար, պահպանաշերտի գծանկարը-*բարձր անցողության, դողի կառուցվածքը՝դիագոնալ*	"ВИ-3"	ОАО "Нижнекамскшина", ОАО "Омскшина" կամ համարժեք	PR16	K(110)	150/146	3350/ 3000
43	Անվադող 28x9-15	լրակազմ	Մոդելը՝ DT-121 VOLTYRE Heavy, նախատեսված հատուկ տեխնիկայի համար, պահպանաշերտի գծանկարը-*հատուկ ամբարձիչի*	"DT-121 VOLTYRE Heavy"	ОАО "Волтайр-Пром" կամ համարժեք	PR18	J(100)	154/149	3750/ 3250
44	Անվադող 7.50-20	լրակազմ	Մոդելը՝ ИЯ-112А, նախատեսված կցորդիչ ականադիր (ՊԱՀ-4)-ի համար, պահպանաշերտի գծանկարը-*ունիվերսալ, դողի կառուցվածքը՝դիագոնալ*	"ИЯ-112А"	ОАО "Омскшина" կամ համարժեք	PR16	B(50)	173	6500
45	Անվադող 1500x600-635	լրակազմ	Մոդելը՝ ВИ-203, նախատեսված ՄԱՀ-543-ի համար, պահպանաշերտի գծանկարը-*բարձր անցողության, դողի կառուցվածքը՝դիագոնալ*	"Ви-203"	ՌԴ արտադրության	PR12	A3(15)	148	3150

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ռինո» ՍՊԸ-ի 06.03.2018թ. բողոքը և 16.03.2018թ. ի լրումն բողոքի ներկայացված գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.03.2018թ. թիվ ԴՎԱ/841 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է

ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անվադողերի և կուտակիչ մարտկոցների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերով թիվ 1-6-րդ, 9-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ և 21-րդ չափաբաժիններով նախատեսվել է ձեռքբերել համասեզոն անվադողեր:

«Ռինո» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է, որ համասեզոն անվադողերը պահանջվել են հիմնականում ռուսական արտադրության մեքենաների համար, այն դեպքում երբ Եվրասիական տնտեսական միության օրենդրությամբ և մասնավորապես ՌԴ-ում համասեզոն անվադողերի հասկացությունը հանվել է շրջանառությունից:

Այսպես՝ Խորհուրդն արձանագրում է, որ համասեզոնային անվադող հասկացությունը Հայաստանի Հանրապետությունում ոչ ՀՀ իրավական ակտերով և ոչ էլ ԵԱՏՄ կանոնակարգերով և օրենքներով շրջանառությունից կամ կիրառությունից հանված չէ, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը ղեկավարվելով ՀՀ կառավարության «Օդաճնշական դողերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» 11.11.2004թ. թիվ 1558-Ն որոշմամբ, որի 43-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանվում է, որ պատրաստի համաչափ դողերի երկու կողերի, իսկ ոչ համաչափ դողերի արտաքին կողի վրա պետք է մակնշված լինեն՝ ձմեռային դողերի համար M+S կամ M.S տառերը կամ ***բոլոր սեզոնների դողերի համար M&S կամ «All seasons» բառերը,*** և Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում նշելով «համասեզոն», ինչպես նաև ծանոթություն մասում նշելով, որ տեխնիկական բնութագրերում նշված «համասեզոն» կամ «ձմեռային» նշանակության անվադողերի վրա պետք է նշված լինեն նաև «համասեզոն»

նշանակության և «ձմեռային» նշանակության տարբերանշանները (մակնշումները), այդ թվում համապատասխանաբար՝ "M+S կամ all season, Պատվիրատուն գործել է իրավաչափ:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ Ռուսաստանի Դաշնությունում համասեզոնային անվադող հասկացությունը հանվել է շրջանառությունից և որ սահմանափակում կամ խտրականություն արտահայտող պայման է կիրառվում դաշնակից երկրի արտադրանքի նկատմամբ, ապա Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը՝

1) ***պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.***

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Վերը նշված հոդվածի դրույթների համաձայն՝ գնման գործընթացը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովի հնարավոր մասնակիցների համար, այլ ոչ թե կոնկրետ երկրների համար, ուստի կոնկրետ երկրի արտադրանքի սահմանափակումը չի նշանակում մասնակիցների մրցակցության պայմանների սահմանափակում, քանի որ կարող են առաջարկվել այլ երկրների արտադրության արտադրանքներ:

Ընթացակարգի հրավերով թիվ 8, 20 և 22-րդ չափաբաժիններով անվադողերի համար ներքին կառուցվածքը նշվել է Silent Armor Technology, KEVLAR և DuPont.TM, իսկ արտադրողը նշվել է ցանկացած:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 8-րդ, 20-րդ և 22-րդ չափաբաժինների Տեխնիկական բնութագրով Պատվիրատուն պահանջելով, որ անվադողերի ներքին կառուցվածքը լինի – /Silent Armor Technology, KEVLAR և DuPont.TM/ կիրառմամբ, խտրական վերաբերմունք է դրսևորել, քանի որ դրանք հանդիսանում են GOODYEAR անվադողեր արտադրող ընկերության նորարարական տեխնոլոգիան և որ «Ռինո» ՍՊԸ-ի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում չի հայտնաբերվել որևէ ապրանքանիշի անվադողեր, որոնք արտադրվում են Silent Armor Technology, KEVLAR և

DuPont.TM կիրառմամբ կամ ստացել են GOODYEAR անվադողեր արտադրող ընկերությունից թույլտվություն նման տեխնոլոգիայի կիրառմամբ անվադողեր արտադրման համար:

Այսպես՝ Խորհուրդն արձանագրում է, որ ԳԲԽ-ԱՄ-2018/37 բողոքով տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչները հայտնել են, որ Ընթացակարգի հրավերի թիվ 8-րդ, 20-րդ և 22-րդ չափաբաժիններով անվադողերի համար ներքին կառուցվածքը նշվել է Silent Armor Technology, KEVLAR և DuPont.TM, սակայն արտադրողը նշվել է ցանկացած, այսինքն Պատվիրատուի կողմից հղում չի արվել GOODYEAR ընկերությանը, քանի որ բացի բողոքում նշված GOODYEAR ընկերությունից, նույն տեխնոլոգիան ունեն առնվազն չորս արտադրողներ՝ DUNLOP, NOKIAN, PIRELLI, MICHELIN ընկերությունները, ուղղակի այդ տեխնոլոգիան տարբեր ընկերությունների մոտ ունի տարբեր անվանումներ, օրինակ՝ Aramid, որոնք մասնակիցների կողմից ներկայացվելու դեպքում Պավիրատուի կողմից կդիտարկվեն որպես համարժեք:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ ցանկանում են ձեռք բերել այդպիսի կառուցվածքով անվադողեր, քանի որ նման կառուցվածքով անվադողերը ապահովում են վազքի երկարաձգում և շահագործման բարձր անվտանգություն:

Միևնույն ժամանակ Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը, քանի որ Պատվիրատուի կողմից նշված չափաբաժիններով գնման առարկայի հատկանիշները բնութագրելիս օգտագործվել են «համարժեք» և «ցանկացած արտադրող» բառերը:

Ընկերությունը հայտնել է, որ համեմատած 2017թ. դեկտեմբեր ամսին Պատվիրատուի կողմից կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-4/3 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում 225/75R16 չափսի համասեզոն անվադողի տեխնիկական

բնութագրի հետ՝ կատարվել է պահանջվող անվադողերի արագության ինդեքսի 40 կմ/ժ-ով բարձրացում:

Ըստ Ընկերության նման փոփոխությունները կատարվել են ոչ թե տվյալ տեխնիկայի համար նման անվադողերի շահագործման հիմնավոր անհրաժեշտությունից ելնելով, այլ հնարավոր մասնակիցների շրջանակը կրճատելու և նրանց մասնակցության հնարավորությունը սահմանափակելու նպատակով:

Պատվիրատուն հայտնել է, որ << պաշտպանության նախարարության կողմից արագության ինդեքսը բարձրացվել է ոչ թե 40 կմ/ժ արագությամբ, այլ 30 կմ/ժամով, ինչը պայմանավորված է ոչ միայն անվադողի կառուցվածքային փոփոխությամբ, այլ նաև տեխնոլոգիաների զարգացման դինամիկայով: Արագության ինդեքսի փոփոխման հետ փոփոխվում են նաև այլ պարամետրեր, որոնք բնութագրում են տվյալ անվադողը, ինչի հետևանքով երկարաձգվում է շահագործման վազքը և ապահովում է բարձր անվտանգություն: Նմանատիպ անվադողերի ձեռքբերման նպատակահարմարությունը առաջացել է նախորդ տարիների ընթացքում այլ մակնիշի ամենագնաց ավտոմեքենաների շահագործումից և որ 225/75R16 չափի և միաժամանակ 190 կմ/ժ արագության ինդեքս ապահովող անվադողեր արտադրվում են առնվազն 11 ընկերությունների կողմից:

Այսպես՝ «Գնումների մասին» << օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Այսպիսով, Պատվիրատուի կողմից Խորհրդին տրամադրված և Խորհրդի կողմից համապատասխան համացանցային կայքերում առկա տեղեկատվության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 225/75R16 չափի և միաժամանակ 190 կմ/ժ արագության ինդեքս ապահովող անվադողերը, այդ թվում նաև համասեզոն անվադողերը արտադրվում են տարբեր անվադողեր արտադրողների կողմից և առկա են միջազգային

շուկայում և կարող են մատակարարվել մեկից ավելի հնարավոր մասնակցի կողմից, հետևաբար Խորհուրդն գտնում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնման առարկայի տեխնիկական բնութագիրը՝ գնման առարկայի մասով չի հանգեցնում գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել նաև, որ գնումը պետք է լինի տնտեսող, արդյունավետ և օգտավետ: Տվյալ դեպքում Խորհուրդը գտնում է, որ տեխնիկական բնութագրով սահմանված գնման առարկայի տեխնիկական նկարագիրը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք առկա կարիքին, որը հանգեցնում է օգտավետ գնման: Խորհուրդը գտնում է, որ հրավերի տեխնիկական բնութագիրը՝ գնման առարկայի մասով հստակ ձևով արտացոլում է Պատվիրատուի այն կարիքը, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Ելնելով վերոգրյալից, Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ուստի նման պայմաններում «Ռինո» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ռինո» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 06.03.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**